



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳՍՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16:

ՀԱՏՈՐ ԺԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1887


ԹԻՒ 6

ԵՐԿԱԹ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ

Չմերուան եղանակին Գաղիոյ Գան քաղաքը կու գան հարուստ շատ այցելուներ որ կը փախչին հիւսիսային աւելի ցուրտ կլիմայէն վայելել անոր մեղմ եղանակը և շրջակայ գեղեցիկ աւապանները: Քաղաքը Միջերկրականին ափանց վրայ է և միայն քանի մը մղոն հեռի Սէնթ Մարկարիթ ժայռուտ կղզիէն:

Սոյն կղզոյն վրայ կը գտնուի ամբողջ մը ուր ասկէ իբր 200 տարի առաջ բանտարկուեցաւ անձանօթ մարդ մը: Մնաց նա հոն 14 տարի խցի մը մէջ որ փակուած էր կրկին երկաթ դուռերով, և որոյ միակ պատուհանը պահպանուած էր 4 կարգ վանդակօք: Բայց անոր վրայ եղած նշանաւորազոյն բանն էր այս որ անոր երեսը ծածկուած էր սև թաւիչ դիմակով՝ հաստատուած պողպատ զսպանակներով, այնպէս կարգադրուած որ կրնար իւր կերակուրն ուտել հանգիստ: Հանել այս դիմակն արգելուած էր անոր մահու սպառնալեօք:

Յամին 1698 այս անձը մեծ հանգիստի Սէնթ Մարկարիթէ փոխադրուեցաւ Պասթիլլի բանտն ի Բարիլդ: Տարուեցաւ գոց կառքի մէջ որոյ առջևէն կ'երթային հեծեալ պահապան զօրքեր: Եւ անոր նախկին պահապանը, Սէն Մարս, նոյն ժամանակը կ'երթար անոր հետ կառավարիչ ըլլալ Պասթիլլի: Բանտարկելոյն թող տըրուած չէր խօսել և ոչ մէկուն հետ այլ միայն Սէն Մարսի, որ կը ծառայէր անոր ինքն անձամբ, ատիճանաւոր մարդու արժան արգանք ընծա յիշով անոր, բայց միշտ ունենալով ատրճանակներ իւր քով սպաննել զնա



ԵՐԿԱԹ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ

եթէ փորձեր յայտնել զինք: Երբ մեռաւ բանտարկեալն, անոր բոլոր հանդերձները այրուեցան, և քիչ ժամանակ ետքը մեռաւ նաև Սէն Մարս առանց յայտնելու հասարակութեան թէ ո՞վ էր այն բանտարկեալը: Այս խնդիրը բնաւ չկրնար լուծուիլ: Ոմանք կը կարծեն թէ նա էր Գաղիոյ Լուդովիկոս ԺԳ. թագաւորին երկուորեակ եղբայրը և թէ կը պահուէր առանձինն զի մի գուցէ յեղափոխութիւն մը ելլէ ի նպատակ անոր: Բայց մատենագիրք ուրիշ շատ մը կարծիքներ կը յայտնեն անոր վրայ, որոց մին էր այս թէ նա էր Հայոց Աւետիս Պատրիարքը զոր Կ. Պոլսոյ Գաղական

դեպտանը նենգութեամբ ձերբակալեց: Բայց ի՞նչ կրնար ըլլալ այսպիսի մարդ մը այսչափ երկար ժամանակ բանտը պահելուն նպատակը:

“ԿԵԱՆՔԻՍ ԵՐԱՆԿԱԳՈՅՆ ՕՐԸ”

Երջանիկ ժամ մի էր Ուոլթըրի համար Նոյեմբերի ամսամաս՝ որ մը կէս օրէն ետքը, երբ անոր բժիշկն ըսաւ, «Ուոլթըր, ի՞նչ պիտի ընէիր եթէ ես ըսէի քեզ թէ Աստուած չուսով պիտի կանչէ զքեզ իւր քով»:

Ուոլթըր զուարթ երեսով ժպտեցաւ և ըսաւ, «Պիտի ըսէի, Շնորհակալ եմ Աստուծոյ՝ շարունակեց ը-

սել, «ոչ թէ պիտի ըսէի ունեցած եմ շատ ցաւ, ոչ, ոչ» Ուոլթըրը տարիներով ցաւազար էր, և շատ ամիսներէ հետէ անկողնոյ կը ծառայէր: «Հիւանդանայէս առաջ իսկ և իսկ հեթանոս մըն էի. այնպէս չէի մայր իմ» դարձունելով իւր երեսը մօրը որ կը կանգնէր անոր անկողնոյն քով, «բայց շատ անդամ շնորհակալ եղած եմ Աստուծոյ զիս հիւանդացունելուն համար, և ինձի զրկելուն համար Քրիստոնեայ բժիշկ մը, և ես պատրաստ եմ երթալ: Ո՛հ, կը փափաքիմ տեսնել զՅիսուս, և ըլլալ անոր հետ»:

Շուտ ետքը, ըսաւ Ուոլթըրը, «կանչեցէք տան մէջ բոլոր գտնուողները ըսել այս աւետարհը: Կ'ուզեմ ըսել անոնց թէ այս է կեանքիս երջանակագոյն օրը, ես շուտով տուն կ'երթամ»:

Ըսաւ անոնց զայս, և յետոյ կարգադրեց թէ այդ լուրն ինչպէս տրուելու էր իւր հօրը որ բացակայ կը գտնուէր այդ ժամանակը:


Ուոլթըրը քանի մը օրեր ևս ապրեցաւ ասկէ ետքը, քաշելով շատ սաստիկ ցաւ, բայց միշտ ըլլալով գուարթ և նայելով դէպ յառաջ: Իւր մեծ ցաւոյ վերջին ժամերուն մէջ կարող էր, ինչպէս կ'ըսէր ինք, «փատահիլ Անոր մինչև ցլխիւ ճան»:

Ուոլթըրը էր տասնևութ տարեկան երբ մեռաւ: Չէր մեծցած, ինչպէս են իմ ընթերցողներէս ոմանք, Քրիստոնեայ շրջանի մէջ, բայց Բարի Հօվիւրը գտաւ զնա ուր որ էր նա, և դըրաւ զնա իւր ուսոց վրայ և տարաւ բոլոր ճամբէն տուն:

Գիտէք թէ ո՞վ է Բարի Հօվիւրը որ դըրաւ իւր կեանքը ոչխարներուն համար, և եթէ ըսուի ձեզ թէ շուտով պիտի ըլլաք Անոր հետ յաւիտեան, կարող էք ըսել, «Այս է կեանքիս երջանակագոյն օրը»:

ՀՆԿՎԵՆԿՈՒԶԻ ԾԱՌԸ

Հաւանականապէս չկայ ուրիշ ծառ մը որ ծառայէ այնչափ շատ նպատակներու որչափ հնդկընկուզին: Հնդկընկուզին կը գտնուի գրեթէ բոլոր տաք երկիրներուն մէջ, բայց ամենէն լաւ



ՀՆԿՎԵՆԿՈՒԶԻ ԾԱՌԸ

կ'աճի ծովուն մօտ: Կը գտնուի խաղաղական Ուկկանոսի փոքր կղզեաց շատերուն մէջ ուր չգտնուիր ուրիշ ծառ: Բուստի փոքր որդերը կը շինեն ժայռ մը ծովուն յատակէն մինչև ջրին երեսը, և թռչունները անոր վրայ կը լեցունեն բաւական հող կամ աղը, այնպէս որ հանդիպին անոնց այս ծառին ծովուն երեսը տատանող պտուղները որ շուտով արմատ կ'արձակէ և այսպէս հողը իւր տեղը կը պահէ: Ուսպէս կղզին տակաւ կ'ընդարձակի և կը մեծնայ հնդկընկուզիին ծառասանը:

Հնդկընկուզը գրեթէ նորածին տղու

մը գլխուն չափ մեծ է, և մեր ընթերցողաց ոմանք հոս տեսած են զայն: Բաց ի ճերմակ մաէն լեցուն է ախորժաճամ կաթով որ շատ հաճելի ըմպելի է Սրեւադարձի երկիրներուն մէջ, մանաւանդ եթէ պտուղն ըլլայ թարմ: Այս պտուղը վերայիշեալ կղզեաց բնակչաց գլխաւոր ուտեստն է, և մեծ քանակութեամբ դուրս կը տարուի կղզիներէն: Հընկընկուզին իւրը կը հանուի, կը գործածուի շինելու օժանդիներ, նաև տեսակ մը օճառ որ կընայ գործածուիլ աղի ջրով: Իւրը հանուելէն ետքը անոր ճնշուած մնացորդէն կը շինուի մոմ: Տերեւներէն

կը հանուի հիւթ որ երբ կը խմորի, կ'ըլլայ արբեցուցիչ ընկելի մը, այս կրնայ նաև եփուելով ըլլալ շաքար:

Պտղոյն արտաքին կեղևէն կամ ծածկոյթէն կը շինուի դրան առջև դրուելու փոխաթ, չուան, և խոշոր վրձին:

Փայտը կը գործածուի իբրև փուռեղի և աստղձ: Անոր երկայն տերևներէն ընկիկը կը շինեն իրենց հանդերձները, կը ծածկեն իրենց երգիքները, և կը շինեն սակառներ և տան ուրիշ կահ կարասիք:

Ծառին բոլոր ոտները կը ձևացունեն փունջ մը անոր դազաթը, և անոնց հասնելու համար ընկիկը պարտին մագլել 60 էն մինչև 90 ոտք, զոր կը յաջողին ընել մեծագոյն երազութեամբ: Բայց Աբեադարձի շատ երկիրներու մէջ կը գրանուին ճարպիկ ուրիշ մագլուներ, այն են կապիկը, որոցմէ խումբ մը հնգկընկուզի ծառաստանի մը մէջ այնպիսի մնաս կը գործեն ինչպէս գող տղայք սելի պարտիդի մէջ:

ԶԻՆԱՑ ՀԱՐՍԱՆԵՑ ՀԱՆՌԻՍԵՐԸ

Երկրի մը հարսանեաց հանդէսները կրնան մեծապէս տարբերել ուրիշ երկրինէն, բայց բոլոր աշխարհ միաբան է սա բանին մէջ թէ վայելուչ է ուրախութիւն ընել հարսանեաց հանդէսներու առտն որ և իցէ եղանակաւ: Թող այն նոր առնչութիւնը հաստատուի այնպիսի պարագայից տակ որ միշտ քաղցր յիշատակ մը թողուն: Թող հարսը և փեսան հազնին ընտիր զգեստներ որչափ որ կարող են առանց ըստ չափ անցանելոյ, և թող բարեկամք ցուցնեն իրենց սէրը և համակրութիւնը պարզէներ տարով և բարեմալթութիւններով:

Երջանիկ ամուք (հարսն և փեսան) զոր կը ներկայացունենք ձեզ այսօր, են Չինաստանի «Չաղկեայ թագաւորութենէն»: Հարսնախօսութիւնն ընողներն էին յատուկ այդ պաշտօնն ունեցող անձինք, որոց մին կը ներկա-

յացունէր հարսին՝ և միւսը փեսային ընտանիքը: Նախ ասոնք փոխադարձաբար իրարու տունն տունակներ ուրոյ վրայ դրուած էր խօսեցեալ օրիորդին և երիտասարդին անունները և անոնց ծննդեան թուականները. այ-

պիտի մնար հարսանիքը իբրև հակառակ շատուածոց կամբին: Բարեբաղդապէս այն միջոցին պնակ մը անգամ չկտարեցաւ:

Երբ եկաւ հարսանեաց օրը, հարսնացուն տարուեցաւ փեսայացուն տունը



ԶԻՆԱՑ ՀԱՐՍԱՆԵՑ ՀԱՆՌԻՍԵՐԸ



ՀԱՐՍՆ ԵՒ ՓԵՍԱՆ

նուհետև դիմեցին բաղդահմային և երբ սա բարի գուշակութիւններ ըրաւ կատարուելիք ամուսնական կապին վրայ, կարգադրուեցան հարսնիքին մանրամասն պայմանները: Բայց եթէ դժբաղդ համարուած դէպք մը պատահէր երկու ընտանեաց միոյն մէջ հարսանեաց հանդէսը տեղի ունենալէն առաջ, ետ-

նը ինչպէս կը ցուցուի առաջին պատկերին մէջ: Նստած էր նա կարմիր «Էռ» էջի մը վրայ և անոր դուռը կը պուրած էր: Անոր առջևէն կ'երթային երաժիշտք և նուագածուք և մարդիկ որ կը կրէին հարսնացուն աստիճանին նշանները և հարսնութեան զգեստ-

ները: Անոր ետևէն կու գային ազգականք: Երբ հասան փեսայացուն տունը, եկաւ նա և անոր տըրուեցաւ բանային որով բացաւ «Էռ»-ին դուռը: Այնուհետև տարաւ իւր հարսը տուն և մտցուց զնա իւր մօր սենեակը ուր վերցուց անոր քօղը, և հաւանականապէս այս առաջին անգամ իւր կենաց մէջ տեսաւ հարսին երեսը:

Ահա հօս կը կանգնին երկուքն ալ ձեր առջև, որ մագլթէք անոնց երկար և երջանիկ կեանք:

ԿՐԻՊՈՅԻՑ ԱՐԻԱՐՈՒԹԻՒՆԸ

Ափրիկէի արևմտեան եզրաց վրայ Քէյթի փալմասի շուրջը կը բնակին զօրաւոր և անվեհեր ցեղեր բնիկներու որ կը կոչուին կրիպոյ: Ունին անոնք հետաքրքրական կերպ մը կարգադրելու իրենց դժուարութիւնները երբ կը յանդին կռուոյ: Երբ մարդ մը կը զարնէ ուրիշի մը, սա չզարնէր անոր ի փոխարէն, ոչ ալ կը բռնէ զնա կամ ջանքեր կ'ընէ դեպիւնը զարնել իւր հակառիկորդը: Եւ ի՞նչ կը կարծէք թէ կ'ընէ նա: Չ'ընէր ուրիշ բան, բայց կը վաղէ կ'երթայ քաղաք—բոլոր բնիկը կը բնակին քաղաքներու մէջ Ափրիկէի արևմտեան ծովեզրաց վրայ—և կ'աղաղակէ որչափ որ կրնայ բարձր ձայնով: Թերևս նա իրեն զարնող մարդուն կրկինն ըլլայ

մեծութեամբ և կարող ծեծել անոր նման երկու հոգի, բայց այդ չէ փոյթ, նա կը վազէ կ'երթայ, շատ արագ և բարձրաձայն աղաղակելով:

Երբ կը հասնի քաղաք, կը սպաննէ առաջին ուտելի կենդանին որ կ'անցնի իւր ձեռքը, ինչ որ ըլլայ այն, ցուլ, ոչխար կամ այծ: Այնուհետև կ'երթայ սպաննել ուրիշ մը, իւր ճամբուն վրայ թողով մեռեալ կենդանիներ, թռչուններ, և այլն, մինչև որ իջնայ սիրտը կամ համարի թէ ըստ արժանւոյն պատժած է իւր հակառակորդը: Փոյթ չէ թէ որո՞ւ են սպանուած այս կենդանիները: Այն ինչ քաղաքին բնակիչք կը տեսնեն թէ սկսած է կենդանեաց սպանումը, կը վազեն ծեծ ուտող քաղաքացւոյն ետեւէն, կը ժողկն բոլոր անոր բարկութեան զո՞հ գացող սպանուած կենդանիները և կը ասնին զանոնք քաղաքին դատաստանատունը, ուր կը պատրաստեն հացկերոյթ բնակչաց համար, և թագաւորավայել ղբօսանք կ'ընեն:

Երբ այս կը վերջանայ, բոլոր անոնք որ կորուստ կրեցին այս բանին մէջ, կուգան և կը պահանջեն փոխարինութիւն իրենց վնասուն, և կը հարկադրեն այն առաջին զարնող մարդը հատուցանել բոլոր այս բաներուն ծախքը խաղաղութիւնը խանդարելուն համար: Եթէ յանցաւորն է աղքատ և անկարող վճարել մեծ գումար, օրէնքը կը պահանջէ որ անոր մտադոյն ազգականք հատուցանեն: Եթէ այն ևս չըլլայ կարող, այն ատեն յաջորդ մտադոյն ազգականք, և այսպէս յաջորդք, մինչև որ վնասն ամբողջ հատուցուի, կամ մինչև որ զրկելոյն բոլոր ազգականք անանկանան: Այսպէս կը ստիպեն անոնք մարդու մը մերձաւորները հսկել անոր վարուց և մասնակից ըլլալ անոր շարագործութեան հետեանքին: Եւ դիւրաւ կրնաք երեւակայել թէ անձնական կռիւներ շատ յաճախ պատահելու չեն այսպիսի պարագայից տակ, և երբ տեղի կ'ունենան կռիւներ, հասարակութիւնը աղտոր հացկերոյթ մը կը վայելէ: Ինչպէս կ'ըլլայ կը կարծէք եթէ «հեթանոսական» այս օրէնքը մտնէ այս երկրին մէջ:

ՆԱԲՈՒՆ Գ. ԵՒ ՎԻՐԱՊՈՑԻՆԵՐԸ  
Նարդէնն Գ. Ժամանակաւ պէտք ունեցաւ վերաբուժական գործողութիւն կատարել տալ իւր վրայ: Վերաբոյժք թուեցաւ թէ շատ ազդուեցան Գաղիոյ կայսեր վրայ այսպիսի

ծանր գործողութիւն մը կատարելու պարտականութենէն, երբ Նարդէնն ըսաւ անոնց:—

«Տեառք, կ'ուզեմ որ այս մասին վարուիք ինձի հետ ճիշդ ինչպէս պիտի վարուէիք օրականով բանող գործաւորի մը հետ որ պէտք ունի ձեր ծառայութեանը:»

Կայսրն իմաստութեամբ խօսեցաւ զայս, վասն զի զիտէր թէ անոնց ձեռքերն պիտի ըլլային աւելի ճարպիկ և ուղեղները՝ աւելի յստակ եթէ մտնային թէ գործողութիւնը կը կատարէին վեհապետի մը վրայ:

Այս դէպքը ճիշդ հակադրութիւնն է անոր որ կը պատմուի Կարգինալ աիւ Պօպի՛ որ Գաղիոյ Առաջին պաշտօնեաց էր նախկին ինքնակալութեան ատեն, և Մ. Պուրտոնի երևելի վիրաբուժին վրայ: Մ. Պուրտոն կոչուեցաւ օր մը կատարել վիրաբուժական ծանր գործողութիւն մը յիշեալ Կարգինալին վրայ: Կարգինալը երբ տեսաւ որ ներս մտաւ վիրաբոյժն, ըսաւ անոր,—

«Պարոն, պէտք չէ որ վարուիս ինձի հետ այն նոյն բերա կերպով ինչպէս կը վարուիս Օթէլ Տիէոյի հիւանդանոցին աղքատ և եղկելի թշուառականներուն հետ:

«Տէր իմ», պատասխանեց Մ. Պուրտոն, «Իւրաքանչիւր այն աղքատ, եղկելի թշուառական, ինչպէս Չեր Բարձրութիւնը կը հաճի կոչել զայն, յայտնի՛ են մէն մի առաջին պատօնեաց:»

ԿԱՏՈՒՆ ԵՒ ԲԱԶԷՆ

Տարօք կատու մը կը բնակէր մացառուա մը բարձր ծառերու մէջերը բերան մը ստորոտը անակի մը մտ ուր կը մեծցունէր իւր ձագերը:

Օր մը բազէ մը վերցուց անոր ձագերէն մին և տարաւ իւր բոյնը բարձր կաղամախի մը վրայ: Կատուի ձագին այսպէս օղին մէջէն կախուած տարուիլը տանջէ բան էր և ցաւաղին, և մայր կատուն գրեթէ խելքը կորսնցունելով իւր զգացած ցաւէն, կը նայէր բազէին վրայ այնպիսի յառեալ աչօք որ բարկացայտ կատու մը միայն կարող էր ընել այնպէս: Երբ բազէն զնայ հասաւ իւր բոյնը, իւր հետ տանելով կերակուր ձագերուն, կատուն անմիջապէս վազեց ելաւ ծառը որուն բունը քառասուն ութ երկայնութիւն ունէր մինչև առաջին ստոր, և իւր յուսահատական բարկութեան մէջ ցատկեց բազէին վրայ և այն ատեն ծագեցաւ սոսկալի կռիւ. անոր մէջ կատուն, բազէն և կատուին ձագը և բազէին ձագերն ամէնքն ինկան դետին, կռուելով և ճիւղ և աղաղակ արձակելով մինչ վար կ'իջնային: Երբ վար դետնին զարնուեցան, ամէնքն ալ

թող տունն զիրար, բազէն թռաւ վեր, բայց մտ գտնուող սրտորդ մը զարկաւ հրացանով վար ձագեց զայն, և մայր կատուն տէր եղաւ տեղոյն. իւր ձագը վիրաւորուած էր և անոր սրունքը կտորած, վնասուած էին նաև բազէին ձագերը որ կերակուր եղան կատուին և անոր ձագերուն:

ՊԱՏԱՍԻՍԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Table with 2 columns: Name and Address. Includes 'Մայիս ամսոյ հանելուկին պատասխանն է' and a list of names like Ք Ա Ն Ա Ն, Ա Բ Ա Ն Ա, etc.

Ուրախ ենք որ յայժ բազումք գտած են այս պատասխանը: Կը յուսանք թէ մեր նորատի ընթերցողք անուանց չհրատարակուելուն պատճառաւ պիտի չդադարին աշխատել լուծել այս հանելուկները որ թէ՛ զուարճալի է և թէ՛ օգտակար զգալու՛մ է անոնց համար: Անշուշտ հաւանք էր մեզ հրատարակել բոլոր պատասխան զրկողներուն անունները, եթէ ներքին ըլլար այդչափ տեղ նուրիւր լիկ անուններուն համար:

ՀԱՆԵԼՈՒԿԻՔ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

Table with 2 columns: Name and Address. Includes 'ՍՈՂՈՄՈՆԻ ՄԷԿ ԱՌԱԿԸ' and a list of names and addresses like 'Ես կը բազկանամ 42 տառերէ', 'Իմ 49. 26. 1. 7. 16. Եր Գրուեցոց իշխանաց մին...', etc.

Կ. Պօլիս ԱՐՄԱՅԻՍ Բ. ՎԱՐՈՒԿԻԱՆՏ

ՓՈՒՔՐԻԿ ՀԱՇՅԻԻ ՄԸ

Գեղէնի պատերազմող ընկեաց թուոյն վրայ աւելցուր աղաթոց ամենափոքր թիւը որ կարէր փրկել զՍողոմ: Գումարը բազմապատկէ Գումարի գայլախաղից թուովը: Արտադրեալը բաժնէ Ա Յովհ. գրքին գրուներուն թուովը: Գումարը բազմապատկէ Սողոմի գահին փոքրիկայ առտիճանաց թուովը: Արտադրեալը բաժնէ Եղիայի սեղան մը շինելու համար գործածած քարերուն թուովը: Գումարէն հանէ Եղիայի եղանց զոյգերուն թիւը: Մնացորդին վրայ գումարէ Խաղաղացաց մանանայ կերած տարիներուն թիւը: Գումարէն հանէ Աշակերտաց հրաչիւք ստացած ձկանց թիւը: Մնացորդը բազմապատկէ Գազարու գեղեզմանը մնացած օրերուն թուովը, որ ունենաւ Նոյսի քարոզելու և տապանը շինելու աշխատած տարեաց թիւը:

Կ. Պօլիս ՅՈՎՍԷՓ ՀԱՅԿԱԶՆ

Ամերիկայի Մեխիկոնոսաց ընկերութեան կողմէն, Արտօնատէր Գ. Բ. ԿՔԻՆ, Տնօրէն—Խմբագիր Գ. Ս. ՊԱՐԼՈՒՄ, Ճինսանճար եօզուշու, Ամերիկայի Իսթն: